«ՀԱԷԿ» ՓԲԸ ЗАО «ААЭК» (ОЗП) 01/290
Գնման ընթացակարգերի բաժին
Отдел закупочных процедур
«05» 12 2025թ. 20 թ

# «ՀԱԷԿ» ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՐՇԵՋ ԱՎՏՈՄԲԱՐՁԻՉ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-47/25-01/290

ք. Մեծամոր

**«ՀԱԷԿ» ՓԲԸ**-ն, ի դեմս գլխավոր տնօրենի տեղակալ - ընդհանուր հարցերի գծով տնօրեն Սամսոն Մաթևոսյանի, որը գործում է գլխավոր տնօրենի կողմից 05.05.2025 թվականին տրված լիազորագրի հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և

**«ՍԱՆՆԻ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ**-ն, ի դեմս տնօրեն Նաիրի Արիստակեսյանի, որը գործում է «ՍԱՆՆԻ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **10 օրացուցային օրից** օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **10 օրացուցային օրից** ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

2.4.11 Պահպանել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ում գործող ներօբյեկտային և անցագրային ռեժիմի բոլոր պահանջները:

2.4.12 Ապրանքը մատակարարելուց նվազագույնը մեկ աշխատանքային օր առաջ պայմանագրի կառավարիչին տեղեկացնել մատակարարման վերաբերյալ: Մատակարարումը կարող է իրականացնել միայն աշխատանքային օրերի ընթացքում՝ ժամը $9^{\underline{00}}$ մինչև $15^{\underline{30}}$ ընկած ժամանակահատվածը:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **67800000 (վաթսունյոթ միլիոն ութ հարյուր հազար)** ՀՀ դրամ, ներառյալ **ԱԱՀ - 11300000** ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **730 օրացուցային օրը կամ 50000կմ վազքը (նշվածներից որը տեղի կունենա առաջինը)**: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **30 աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև. ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են

պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Վաճառողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում գնորդը վճարումներն իրականացնելիս ապահովի վաճառողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում գնորդը պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է գնորդի կողմից բանկին վճարման հանձնարարական տալու օրվան նախորդող օրը:

8.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Պայմանագիրը կազմված է **15** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| **«ՀԱԷԿ» ՓԲԸ** | **«ՍԱՆՆԻ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ** |
| 0910, ք. Մեծամոր, Արմավիրի մարզ,<br>Հ/Հ 1930000199200100<br>«Կոնվերս Բանկ» ՓԲԸ, ք. Երևան,<br>**ՀՎՀՀ** 04401874,<br>**Հեռ./ֆաքս**՝ 28-18-80, 28-06-69,<br>**Հեռ.**՝ 20-04-91, 36-32<br>**E-mail:** anpp@anpp.am | 0733, գ.Ոստան, Արարատի մարզ,<br>Արարատյան փողոց 12ա,<br>Հ/Հ 163098030501,<br>«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ,<br>**ՀՎՀՀ** 04236869,<br>**Հեռ.**՝ 096-98-99-99,<br>**E-mail:** ceo@corsa.am |
| ........................... **Ս. Մարտիրոսյան** | ........................... **Ն. Արիստակեսյան** |

*Պայմանագրի կառավարիչ՝ Արթուր Մելքոնյան*
***հեռ. 010280035, email: artur.melqonyan@anpp.am***

Հավելված N 1
«05» «12» 2025թ. կնքված
**N ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-47/25-01/290** պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը /ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | |
| | | | | | | | | Հասցեն | Ժամկետը |
| 1 | 34141210 | ***Հրշեջ ավտոամբարձիչ*** | <u>ֆիրմային անվանումը</u>՝ **HOWO**<br><br><u>մոդելը</u>՝ **ZZ1257N4641W**<br><br><u>արտադրողի անվանումը</u>՝ **China National Heavy Duty Track Group Co., Ltd, Չինաստան** | Բազային շասսի՝ HOWO:<br>Էկոլոգիայի չափանիշ նվազագույնը՝ Եվրո-2:<br>Մեքենայի առավելագույն վազքը ընդունման պահին՝ 1000 կմ:<br>Գույնը՝ կարմիր:<br>Ըստ բազային շասսի մեքենան ունենա 35-40 մետր ավտոամբարձիչի բարձրություն և ավտոամբարձիչի գագաթին ունենա ինքնակառավարվող զամբյուղ՝ նվազագույն աշխատանքային բեռը՝ 350-400 կգ:<br>Շասսի արտադրությունը՝ սկսած 2025թ.-ից:<br>Անիվների բանաձևը՝ 6×4:<br>Անիվային բազա 4300-4360+1300-1360մմ:<br>Շարժիչը՝ դիզելային: Շարժիչի հզորությունը՝ 330-370 ձ.ու:<br>Փոխանցման տուփ՝ մեխանիկական կամ ավտոմատ, առավելագույն արագությունը՝ առնվազն 70-90 կմ/ժ:<br>Ընդհանուր չափերը ԱՍ տրանսպորտային դիրքում երկարությունը՝ 10-14 մ, լայնությունը՝ 2.5-2.9 մ, բարձրությունը՝ 3.5 - 4 մ:<br>Ընդհանուր զանգվածը ԱՍ, 24 000կգ ից ոչ ավելի:<br>Հիմնական շասսիի խցիկում վարորդի նստատեղը հագեցած է կառավարման համակարգի առկայությամբ և տեսածայնագրիչ՝ առնվազն 180 ° (որի պատկերը կարտացոլվի խցիկում վարորդի դիմացը տեղադրված պլանշետի վրա): Խցիկի կառուցվածքը - նստատեղ՝ երեք | հատ | **67800000** | **1** | ***Արմավիրի մարզ, ք. Մեծամոր «ՀԱԷԿ» ՓԲԸ*** | ***Պայմանագրի կնքման օրվանից 150 օրացուցային օրվա ընթացքում*** |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | հոգի առջևում, երեք հոգի հետևում 3+3: Հետևի նստատեղը ունենա հնարավորություն շնչառական ապարատներ ամրացնելու: Հետևի հատվածում նստողների քանակը լինի 3 և իրենց մեջքի հենվելու հատվածը ունենա 15-35սմ հաստություն: Մեջքի հենարանի արանքում տեղադրված լինի շնչառական սարքավորման ամրացիչներ, որոնք պատրաստված են մետաղից: Ամրացիչները պետք է ունենան գոտի, որը կպահի շնչառական սարքավորումը մեքենայի շարժման ընթացում և հնարավորություն կտա փրկարարներին արագ արձագանքել:<br>Ջրի բաք՝ բարձր որակի չժանգոտվող նյութից, տարողությունը՝ 1-2 տոննա:<br>Փրփրահեղուկի բաք՝ բարձր որակի չժանգոտվող նյութից, տարողությունը՝ 100-200լ:<br>Հրշեջ պոմպ՝ հզորության առավելագույն ճնշում՝ 1.140-1.160 ՄՊա, հոսք՝ 30-40 լ/վրկ, ճնշում՝ 1,0-1.2 ՄՊա, պտույտները՝ 3750+/-50 կամ 53-54 կՎտ:<br>Ջրի պոմպը տեղադրված պետք է լինելու մեքենայի ետին կամ ամբարձիչի և խցիկի մեջտեղի հատվածում, բարձր որակի չժանգոտվող մետաղական տուփի մեջ հավաքված:<br>Առկա է կլորացման ոլորան փաթաթված առնվազն 25մմ ռետինե փողրակով:<br>Ջրի պոմպի ծնը, ներքաշման ու արտանետման փողրակների միացման ելքերի առկայությամբ, ոչ պակաս՝ 75մմ ներքաշման փողրակի մուտք, կարողանա ջուր կլանել բնական ջրի աղբյուրից, հեղուկի բաքից: Պոմպի խցիկի աջ և ձախ կողմերում առկա լինի մեկական ելք՝ առնվազն 77 կամ 89 մմ տրամագծով հրշեջ փողրակների միացման գլխիկներով՝ չավտոմատացված գնդիկավոր հսկիչ փականով կառավարվող:<br>Ամբարձիչի ռետինե փողրակի երկարությունը առնվազն 40մ, միացված լինի ամբարձիչի մետաղական խցիկին և ջրի պոմպի աշխատանքի արդյունքում ջուր մատակարարի 40մ բացվածք ունեցող ամբարձիչի վերին հատված:<br>Հագեցված լինի հավասարակշռությունի ֆիկսող հենակներով՝ նվազագույնը 4: Ոտքերի բացվածք | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | *հորիզոնական համապատասխան փվյալ մեքենայի չափսերին և քաշին:<br>Հեռակառավարման վահանակի հնարավորությամբ, կառավարման հնարավորություն ամբարձիչի կողքից:<br>Հնարավորություն ունենա բարձրացնելու փրկարարներին ամբարձիչին ամրացված մետաղական խցիկից:<br>Խցիկի դիմային հատվածում պետք է ամրացված լինի փողրակի համար նախատեսված ստենդ: Խցիկը պատրաստված լինի բարձր որակի ածխածնային կամ այլ համապատասխան նյութից, որպեսի արտաքին աշխատանքների, ջրի, փրփրահեղուկի կամ այլ նյութերի արդյունքում չժանգոտի:<br>Ունենա հնարավորություն հեռակառավարմամբ ջուր մղելու ամբարձիչից: Խցիկը և ամբարձիչը նույնպես ունենան հեռակառավարման վահանակ: Խցիկում տեղադրված լինի կապ հաստատելու միջոց ներքևում գտնվող մարդկանց հետ:<br>Ձայնային և լույսային ազդանշանի՝ խոսափողի հնարավորությամբ, հագեցված ոչ պակաս 2 տեսակի ձայնային ազդանշաններով՝ վարորդի խցիկից վահանակով կառավարվող:<br>Առավելագույն աշխատանքային բարձրացման բարձրությունը ամբողջությամբ երկարաձգվում և բարձրացվում է առավելագույն անկյուն՝ առնվազն 35-40մ Առավելագույն աշխատանքային բեռը չկապված ամբարձիչի գագաթին՝ առնվազն 350-400 կգ:<br>Յանկ՝ հրշեջ ավտոամբարձիչի փեխզինվածութան.<br>Զամբյուղից ամրակապվելու գոտիներ 4 հատ՝ կառաբիններով:<br>Անվադողերի շղթա՝ 1 զույգ:<br>Փողրակ՝ 30մ՝ 2 հատ:<br>Փողրակ 75-77մմ ներքին տրամագծով, նյութը և կառուցվածքը համաձայն EN 14540:2014 ստանդարտի՝ եռաշերտ, արտաքինը ռետին, միջինը սինթետիկ գործվածք, ներքինը ռետին (EPDM)՝ առնվազը 0.3մմ հաստությամբ: Գլխիկները՝ ալյումինե: Փողրակը նախատեսված է -60 °C +100 °C-ի պայմաններում հրդեհաշիջման աշխատանքների համար: Աշխատանքային ճնշումը՝ ոչ պակաս 17 Մթ/ճ (1.7* | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ՄՊա): Պատռվածքային ճնշումը՝ ոչ պակաս 48 Մթ/ճ (4.8 Bar): Դիմացկունությունը կրակի հետ շփվելիս 300 °C-ի պայմաններում՝ ոչ պակաս 30 վայրկյան:<br>Երկարությունը՝ 20+/-1 մետր:<br>Մատակարարման ժամանակ ներկայացվում է EN 14540:2014 և/կամ ISO9001:2008 և/կամ ISO14001:2015 և/կամ IQNet OHSAS18001:2007 համապատասխանության սերտիֆիկատներ:<br>Եռաճյուղ բաժանարար 2 հատ՝ նախատեսված է 75-77 մմ փողրակների փոխանցումը և բաժանումը 2 և ավելի փողրակների, ինչպես նաև 2 տարբեր տրամագծի փողրակների միացումը միաժամանակ մեկ եռաբաշխիչից: Միացման գլխիկների չափսերը՝ 75-77մմ, 51-52մմ, 65-66մմ: Փոխանցման մանեկներ՝ 75-66մմ - 2 հատ, նյութը՝ ալյումին, աշխատանքային ճնշում, ոչ պակաս 1.6ՄՊա:<br>Ընդհանուր չափսեր, ոչ ավել 135x142 մմ,<br>քաշը 1200գ +/- 100գ,<br>լայնություն ոչ ավել 142 մմ, երկարություն ոչ ավել 135 մմ:<br>Փոխանցման մանեկներ՝ 75-52 մմ - 2 հատ, նյութը ալյումին, աշխատանքային ճնշում ոչ պակաս 1.6ՄՊա,<br>քաշը 1000գ+/-100գ, ընդհանուր չափսերը ոչ ավել 120x142 մմ, լայնությունը ոչ ավել 142 մմ,<br>երկարություն ոչ ավել 120 մմ:<br>Փոխանցման մանեկներ՝ 65-52 մմ - 2 հատ, նյութը ալյումին, աշխատանքային ճնշում ոչ պակաս 1.6ՄՊա,<br>քաշը 1000գ+/-100գ, ընդհանուր չափսեր ոչ ավել 120x142 մմ, լայնությունը՝ ոչ ավել 142 մմ,<br>երկարությունը՝ ոչ ավել 120 մմ:<br>Երկուական փոխանցման մանեկներ՝<br>Ռուս-Չինական/Չինական-ռուս 75-66 մմ, 66-75 մմ, 75-52 մմ, 52-75 մմ, 65-52 մմ, 52-65 մմ:<br>Ներքաշող փողրակներ՝ 75-77 մմ տրամագծով՝ առնվազն 2 հատ: Ներքաշող փողրակների գլխիկները երկու կողմից լինեն գործարանային միացմամբ:<br>Ներքաշող ֆիլտր հետադարձ փականով ներառյալ պարան (10մմ-10մ): Ներքաշող փողրակ 75-77 մմ տրամագծով, | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | կմախքը մետաղական, ռետինե և կտորե շերտերով, ներսից ռետինապատ, երկու գլխիկները ալյումինե:<br>Նախատեսված է -50-60 °C-ից +70-80 °C ջերմաստիճանի պայմաններում աշխատանքների համար:<br>Աշխատանքային ճնշումը՝ ոչ պակաս 1 Մթ/6 (0,3 ՄՊա):<br>Ճկման նվազագույն շառավիղը՝ 600մմ:<br>Երկարությունը՝ առնվազը 4մ:<br>Գործարանային արտադրության: Անհատական փաթեթավորմամբ, փաթեթները պիտակավորված, պիտակի վրա տեղեկատվություն՝ ապրանքի անվանման, չափսի (տրամագծի), տեխնիկական պայմանի, արտադրող կազմակերպության, թողարկման տարեթվի մասին:<br>Փողրակի բանալի՝ Ø 65մմ - 1 հատ,<br>Փողրակ՝ Ø 52մմ - 1 հատ:<br>Հիդրանտի բանալի՝ 1 հատ,<br>(<< հիդրանտներին համապատասխան):<br>Դիէլեկտրիկ մկրատ՝ 2 հատ:<br>Բահ՝ 1 հատ:<br>Լինգ՝ 1 հատ:<br>Գոտի կարաբինով՝ 4 հատ:<br>Ռետինե ձեռնոց՝ 2 զույգ:<br>Կամրջակ՝ 2 հատ:<br>Անվադողերի արգելակիչ՝ 2 հատ:<br>Կրակմարիչ՝ ОП-5 - 1 հատ:<br>Կրակմարիչ՝ ОУ-5 - 1 հատ:<br>Փոխանցման գլխիկներ՝ 65*75 - 1 հատ:<br>Շնչառական ապարատ փրկման դիմակով՝ 3 հատ:<br>Ձող սանդուղք՝ 1 հատ, նյութը ալյումին, երկարությունը 3300-3500 մմ, հեռավորությունը քայլերի միջև 300-340 մմ, գործարանային փորձարկման հավաստագիր:<br>Փայտի սղոց՝ 1 հատ:<br>Մոտո սղոց՝ 1 հատ:<br>ԱԹՍ 1 հատ՝ տարածքը հետախուզելու համար:<br>Ծրագրային հնարավորություն հեռախոսի, պլանշետի կամ այլ տեխնիկայի միջոցով տեսնելու ԱԹՍ-ի կողմից նկարված տեսաձայնագրությունները՝ ԱԹՍ-ի թռչելու պահին: | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ԱԹՍ-ը պետք է կառավարվի կամ հեռակառավարման վահանակով կամ ծրագրի միջոցով, որը կաշխատի հեռախոսի, պլանշետի կամ այլ տեխնիկայի միջոցով: Ամբարձիչի խցիկի լապտեր՝ 1 հատ: Սաղավարտ՝ 6 հատ, նախատեսված փրկարարական աշխատաքներ իրականացնելու համար, ունենա կից կտորե գործվածք, որը կպաշտպանի երեսը, ծոծրակը և վիզը բարձր ջերմաստիճանային աշխատանքների ժամանակ: Ունենա թափանցիկ պլաստիկ դիմապակի, որը կփակի երեսը՝ հիմնականում աչքերը: Վթարային կանգառի նշան՝ 1 հատ, դեղատուփ՝ 1 հատ: Շարժական գեներատոր և լապտեր՝ նախատեսված էլեկտրական գործիքների միացման և օրվա մութ ժամերի լույսային աշխարակի աշխատանքի անխափան ապահովման համար, առնվազն 3,5 Կվտ, քաշը ոչ ավել՝ 20կգ, բենզինային: Լուսատուն ունենա առնվազն 3 աշխատանքային ռեժիմ: Մեքենայի հողանցման համակարգ: | | | | | |

*Լրացուցիչ պայմաններ՝*

1. Ավտոամբարձիչը և կից ապրանքները պետք է ունենան որակի հավաստագիր կամ անձնագիր՝ երաշխիքային սպասարկման պարտավորությունների վերաբերյալ նշումով (նվազագույնը 2 տարի կամ վազքը 50 000կմ), արտադրության տարեթիվը՝ 2025 թվականից սկսած: Փաստաթղթերը պետք է թարգմանված լինեն հայերեն կամ ռուսերեն լեզվով:
2. Ավտոամբարձիչին կից տրամադրվող փաստաթղթեր՝ շասսիի շահագործման ձեռնարկ, մեքենայի գործիքների ցանկ, հրշեջ շարժիչի շահագործման ձեռնարկ, հրշեջ մեքենաների հրդեհաշիջման սարքավորումների ցանկ, ամբարձիչի կառավարման ձեռնարկ:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «ՀԱԷԿ» ՓԲԸ | «ՍԱՆՆԻ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ |
| ............ Ս. Մաթևոսյան | Ն. Արիստակեսյան |

*Պայմանագրի կառավարիչ՝ Արթուր Մելքոնյան*
*հեռ. 010280035, email: artur.melqonyan@anpp.am*

Հավելված N 2
« 05 » « 12 » 2025թ. կնքված
N ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-47/25-01/290 պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել **2026 թ**-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | **հունվար** | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 34141210 | Հրշեջ ավտոամբարձիչ | **67800000** | 67800000 | 67800000 | 67800000 | 67800000 | 67800000 | 67800000 | 67800000 | 67800000 | 67800000 | 67800000 | 67800000 | **67800000** |

* Վճարումը կկատարվի ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով փաստացի մատակարարված ապրանքի հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա 5 աշխատանքային օրվա ընթացքում:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «ՀԱԷԿ» ՓԲԸ | «ՍԱՆՆԻ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ |
| Ե. Մաթևոսյան | Ն. Արիստակեսյան |

*Հավելված N 3*
*«    »    20 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ____________________ | ____________________ |
| գտնվելու վայրը ________ | գտնվելու վայրը ________ |
| հհ ________ | հհ ________ |
| հվհհ ________ | հվհհ ________ |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*«    » «        » 20    թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «    » «        » 20    թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքը ընդունեց |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ____________________ | ____________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«    »       20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ  N _______
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Գնորդ) և _______________
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20  թ. _______________ -ին կնքված N _______________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _______________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_______________
ազգանուն, անուն
_______________
Ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_______________
ազգանուն, անուն
_______________
ստորագրություն

*Հավելված N 4*
*«      »      20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԾԱՆՈՒՑՈՒՄ

______________________________________ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. ____________________-ի և ____________________-ի միջև «--»      20  թ. կնքված
գնորդի անվանումը        վաճառողի անվանումը

«———/———» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

____________________-ի   միջև  «—»   20  թ-ին կնքվել է «-------------------» ծածկագրով ֆակտորինգի
վաճառողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 8.10 կետով սահմանված պահանջներին:

______________________________________        ______________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«—»      20  թ.